



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Ալեք Մանուկյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն
հեռ.597196

ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 3 (մայիս 1992 թ.)

Ձմեռվա ընդհանուր դժվարությունները անդրադարձել են նաև Մաթեմատիկական Միության գործունեության վրա՝ ցրտերի պատճառով հետաձգվել են ընդհանուր գիտական նիստերը: Տեխնիկական միջոցների (համակարգիչ, քսերոքս) բացակայության պատճառով էապես ուշացվում է տեղեկություններ և հայտարարություններ հասցնելը Միության անդամներին: Հրավիրում ենք բոլորին հնարավորին չափ օգնել "Տեղեկաթերթ"ի պատրաստման գործին:

⊗**ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**⊗ Դեկտեմբերի 26-ին (1991 թ.) հոբիրդի 3-րդ նիստում որոշվեց անցկացնել ակադեմիկոս Ա.Շահինյանի 85-ամյակին նվիրված հիշողությունների երեկո: *հոբիրդի հունվարի 7-ի նիստում ա) հաստատվել են երկու ուսանողների թեկնածությունները ուսումը Ֆրանսիայում շարունակելու համար, բ) հաստատվել են Միության նոր անդամներ, գ) մաթեմատիկական ամբիոնների վիճակը վերաքննարկումից հետո որոշվեց ուղարկել հոբիրդի տեսակետն արտահայտող մի նամակ Բարձրագույն կրթության և Գիտության նախարարություն: Նշենք, որ այդ կապակցությամբ նախարարության կողմից ստեղծվել է համապատասխան հանձնաժողով, որն արդեն սկսել է իր աշխատանքը: *Մայիսի 19-ին ՀՄՄ ընդհանուր գիտական նիստում ելույթ է ունեցել պրոֆ. Հրանտ Մառանջյանը (ԳԱ հաշվող. կենտրոն) **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԲԻ ԱՆԳՐԱԳԱՐՁ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ** թեմայով:

⊗**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**⊗ Սույն թվի փետրվարի 27-ին համալսարանի մաթեմատիկական ֆակուլտետի դեկան ընտրվեց պրոֆ. Վ.Մուսոյանը:
*Մեր Միության Կարչության անդամ պրոֆ. Հ.Ղալարյանը նշանակվեց ՀՀ Լուսավորության նախարար:
*Գիտության Ֆինանսավորման մրցանակային համակարգի անցնելու կապակցությամբ հանրապետությունում կազմակերպվել է գիտության տարբեր ճյուղերից ներկայացված թեմաների պետական փորձաքննություն: Նշենք, որ մաթեմատիկական գրեթե բոլոր թեմաները հաջողությամբ անցել են փորձաքննության առաջին, ակադեմիական փուլը:

⊗**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՆՆԵՐ**⊗ "Տեղեկաթերթի" նախորդ համարի տպաքանակի մի մասը ապահովվել էր Մաթեմատիկայի ինստիտուտի աջակցությամբ (գիտ.քարտուղար՝ պրն. Բ.Քատիկյան)
Հունվարի 9-ին համալսարանում դասախոսությամբ (Simple C-algebras) հանդես եկավ Նեվադայի համալսարանի պրոֆ. Ալեքս Բյունջյանը (Reno, Nevada): Պրն Բյունջյանի խնդրանքով Վեկուցման հոնորարը Միությունը ուղարկեց Ղարաբաղ:

⊗**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**⊗ Հայկական Հանրագիտարանի Գլխավոր խմբագրությունից ստացվել է մաթեմատիկական տերմինների բացատրական բառարանի բառացանկի նախագիծ: Մանրամասն տեղեկությունների համար մինչև մայիսի 31-ը դիմել Միության գրասենյակ:
*Մայիսի 26-ին (երեքշաբթի), ժ.17.00 նշանակված է ՀՄՄ հոբիրդի նիստ, որին, ըստ ՀՄՄ Կանոնադրության կարող են մասնակցել ՀՄՄ բոլոր անդամները:
*Սույն օրը ժ.18.00 կկայաթա ակադեմիկոս **ԱՐՏԱՇԵՍ ԾԱՀԻՆՅԱՆԻ** հիշատակին նվիրված ՀՄՄ ընդհանուր նիստը: Հրավիրվում են բոլոր ցանկացողները:

‡ Կյանքից հեռացավ մեր Միության անդամ, Մանկավարժական ինստիտուտի ամբիոնի վարիչ Սկրյաբին Ստեփանյանը: Խորին ցավակցություններ ընտանիքին և մերձավորներին ‡

⊗**ՀԱՎԵԼՎԱԾ**⊗ Այս համարում շարունակում ենք հրապարակել ՀՄՄ դիմող և հոբիրդի կողմից հաստատված անդամների ցուցակը (բոտ ներկայացված դիմումների ժամկետի): Տվյալների